



Հայաստանի կենսաբ. հանդես, 3 (72), 2020

ՈՍՊԻ ՆՈՐ ՍՈՐՏԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԿՈՒՄԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՔ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐՈՒՄ

Ա.Ա.ԲԱՐԲԱՐՅԱՆ, Լ.Գ.ՄԱԹԵՎՈՍՅԱՆ, Գ.Գ.ՇԱԲՈՅԱՆ

Երկրագործության գիտական կենտրոն
ashxenbarbaryan1949@gmail.com, lusnyak.matevosyan81@mail.ru,
gayaneshaboyan@mail.ru

Հանրապետության գյուղատնտեսության համար ուսումնասիրվում է բուսական սպիտակուցի բարձր պարունակությամբ արժեքավոր հատիկաընդեղեն մշակաբույս: Սակայն վերջին տարիներին հանրապետությունում այն մշակվում է սահմանափակ տարածությունների վրա, որի պատճառը այս մշակաբույսի բարձր բերքատու, տարբեր բնակլիմայական պայմաններին հարմարված սորտերի բացակայությունն է:

Մեր կողմից Արարատյան դաշտի պայմաններում ուսումնասիրվել է ուսպի համաշխարհային հավաքածուից ընտրված վաղահաս, բարձր բերքատու, կանգուն Ամբերդ սորտը, որը փորձարկվել է հանրապետության նախալեռնային և լեռնային գոտու պայմաններում: Այս սորտի էկոլոգիական փորձարկումը, ցույց է տվել, որ այն իր կենսաբանական և տնտեսական ցուցանիշներով գերազանցում է տեղական Թալինի-6 սորտին:

Ուսպ – սորտ – վաղահաս – բարձր բերքատու – գյուղատնտեսական գոտի

Благодаря высокому содержанию растительного белка, чечевица является ценной зернобобовой культурой для сельского хозяйства республики Армения. Однако в последние годы в республике чечевица возделывается на ограниченных площадях, причиной которого является отсутствие высокопродуктивных, экологически устойчивых и хорошо адаптированных к местным условиям сортов этой культуры.

В условиях Араратской равнины из мировой коллекции чечевицы изучен и отобран раннеспелый, высокопродуктивный, устойчивый к полеганию сорт Амберд, который испытывался также в предгорной и горной зонах республики. Экологическое испытание этого сорта показало, что по биологическим и хозяйственным показателям сорт Амберд превосходит местный сорт Талини-6.

Чечевица – сорт – раннеспелый – высокопродуктивный – сельскохозяйственная зона

Due to the high content of vegetable protein, lentils are a valuable leguminous crop for agriculture in the Republic of Armenia. However, in recent years, lentils have been cultivated in limited areas in the republic, the reason for which is the lack of varieties of this crop that are highly productive, environmentally sustainable, and well adapted to local conditions.

In the conditions of the Ararat plain from the world lentil collection, an early-ripened, highly productive, lodging resistant variety Amberd was studied and selected, which was also tested in the foothill and mountain zones of the republic. An environmental test of this variety showed that, in terms of biological economic indicators, the Amberd variety is superior to the local Talini-6 variety.

Lentils – grade – early ripe – highly productive – agricultural zone

Հանրապետության գյուղատնտեսության համար հատիկաընդեղենները, այդ թվում ոսպը, համարվում են հեռանկարային և արժեքավոր մշակաբույսեր, սակայն դրանց ցանքատարածությունները խիստ սահմանափակ են բարձր բերքատու, տարբեր բնակլիմայական պայմաններին հարմարված սորտերի բացակայության պատճառով: Հաշվի առնելով այս մշակաբույսերի կենսաբանական, ագրոտեխնիկական, կերային և պարենային գերազանց հատկությունները, ինչպես նաև նրանց բացառիկ դերը բուսական սպիտակուցի ավելացման գործում, առաջնահերթ է դառնում հատիկաընդեղեն մշակաբույսերի նոր սորտերի ստացումը և ներդրումը հանրապետության տարբեր գյուղատնտեսական գոտիներում [1,2]:

Ոսպը, որպես հատիկաընդեղեն մշակաբույս առանձնանում է իր բարձր սպիտակուցի պարունակությամբ: Սպիտակուցի պարունակությունը ոսպի հատիկում կազմում է 30 %, միևնույն սխեմի մոտ այն 28 % է, ոլոռի մոտ՝ 25 %: Սպիտակուցի պարունակությամբ ոսպը հատիկաընդեղեն մշակաբույսերից զիջում է միայն սոյային, որի հատիկում պարունակվում է 40 % սպիտակուց [3]:

Ակնհայտ է, որ գյուղատնտեսական մշակաբույսերի բազմազանությունը, հատկապես հատիկաընդեղեններով, խթան կհանդիսանա սեփական արտադրության հաշվին բնակչության պահանջարկի բավարարմանը:

Ոսպի նոր սորտերի ստացման ուղղությամբ կատարվող հետազոտական աշխատանքներում Երկրագործության գիտական կենտրոնը համատեղ ծրագրեր է իրականացնում ICARDA միջազգային գիտական կենտրոնի հետ, որի նպատակն է ուսումնասիրել ոսպի համաշխարհային հավաքածուն, ընտրել բարձր բերքատու, հիվանդությունների նկատմամբ կայուն նոր սորտեր և սորտանմուշներ, որոնց ներդրումը գյուղատնտեսական արտադրության մեջ կնպաստի այս արժեքավոր մշակաբույսի ցանքատարածությունների ընդարձակմանը:

Չափազանց կարևոր խնդիր է համարվում Հանրապետության տարբեր գյուղատնտեսական գոտիներում ոսպի նոր, բարձր բերքատու սորտերի ներդրումը, որոնք կայուն են արտաքին միջավայրի անբարենպաստ պայմաններին և պիտանի են մեքենայացված բերքահավաքի համար [5]:

Այս խնդիրների լուծման համար հանրապետության երեք գյուղատնտեսական գոտիներում՝ Արարատյան դաշտ, Նախալեռնային և լեռնային գոտիներում փորձարկվել են ոսպի տարրեր, նպատակ ունենալով հանրապետության տարբեր բնակլիմայական պայմաններում պարզել ոսպի աճի ու զարգացման, բերքի կառուցվածքային տարրերի և բերքատվության առանձնահատկությունները:

Նյութ և մեթոդ: Ուսումնասիրությունները կատարվել են 2018-2019 թթ: Արարատյան դաշտի պայմաններում հետազոտություններն իրականացվել են Երկրագործության գիտական կենտրոնի Էջմիածնի փորձարարական տնտեսությունում: Ուսումնասիրվել է ոսպի համաշխարհային հավաքածուից 30 սորտանմուշներ, որոնց մեջ ընդգրկվել են ցրտադիմացկուն, վաղահաս, կանգուն սորտեր: Այս պայմաններում ուսումնասիրված 30 սորտանմուշներից ընտրվել է մեկ կանգուն վաղահաս, բարձր բերքատու սորտ՝ Ամբերդ անվանմամբ: Այն արժեքավոր է այն տեսանկյունից, որ նպատակահարմար է նաև մեքենայական բերքահավաքի համար: Նշված սորտը Էկոլոգիական փորձարկման է դրվել հանրապետության Նախալեռնային և լեռնային գոտու պայմաններում:

Նշված գյուղատնտեսական գոտիներում փորձերը դրվել են 100մ² փորձամարզերում, երեք կրկնողությամբ: Ստուգիչ է հանդիսացել տեղական Թալինի-6 սորտը: Արարատյան դաշտում ցանքը կատարվել է ապրիլի առաջին տասնօրյակում, իսկ Նախալեռնային և լեռնային գոտում՝ ապրիլի վերջին տասնօրյակում:

Հանրապետության երեք գյուղատնտեսական գոտիներում կատարված ուսումնասիրության արդյունքները վկայում են այն մասին, որ տարբեր բնակլիմայական պայմաններում ոսպի միևնույն սորտերը ապահովում են կենսաբանական և բերքատվության տարբեր ցուցանիշներ:

Ստացված բերքի արդյունքները ենթարկվել են մաթեմատիկական մշակման՝ ըստ դիսպերսիոն վերլուծության մեթոդի [4]:

Արդյունքներ և քննարկում: Փորձարկման արդյունքները ցույց են տվել, որ բոլոր բնակլիմայական պայմաններում ամենամեծ բարձրություն (52, 42, 48 սմ) ունեցել է ընտրված Ամբերդ սորտը: Բույսերի այսպիսի բարձրության դեպքում սորտը աչքի է ընկել կանգունությամբ՝ վեգետացիայի բոլոր փուլերում (աղ. 1):

Աղյուսակ 1.

Գյուղատնտեսական գոտի	Սորտի անվանումը	Բույսի բարձրությունը, սմ	1 բույսի ցողունների թիվը, հատ	1 բույսի ունեղների քանակը, հատ	1 բույսի հատիկների քանակը, հատ	1 բույսի հատիկների կշիռը, գ	1000 հատիկի կշիռը, գ	1 մ ² բերքը, գ	Միջին բերքը, գ/հա	Բերքի հավելումը, գ/հա
Արարատյան դաշտ	Թալինի 6	49	3	97	103	4,70	45,6	211,6	21,2	-
	Ամբերդ	52	4	121	154	5,80	37,6	261,0	26,1	4,9
Նախալեռնային գոտի	Թալինի 6	39	3	70	103	4,70	45,6	204,3	20,4	-
	Ամբերդ	42	3,5	105	167	5,50	42,6	247,5	24,7	4,3
Լեռնային գոտի	Թալինի 6	45	3,5	86	107	5,30	49,0	238,0	23,8	-
	Ամբերդ	48	4,5	140	229	6,50	284	292,3	29,2	5,4

Արարատյան դաշտ ԱԵՏՕ5=2.6g/հա

Նախալեռնային գոտի ԱԵՏՕ5=3.9 g/հա

Լեռնային գոտի ԱԵՏՕ5=1.3g/հա

Ընտրված սորտը առանձնացել է նաև 1 բույսի ցողունների միջին թվով: Ըստ բնակլիմայական պայմանների այս ցուցանիշը Ամբերդ սորտի մոտ տատանվել է 3,5-4,5 հատ, իսկ ստուգիչ սորտի մոտ 3-3,5 հատի սահմաններում: Այսպիսով, ուսպի ընտրված սորտը արժեքավոր է, քանի որ տեղական սորտի համեմատությամբ առանձնանում է լավագույն կենսաբանական ցուցանիշներով, ինչը կարևորվում է հատիկաընդուն մշակաբույսերի ընտրության ժամանակ:

Արարատյան դաշտի պայմաններում Ամբերդ սորտը ապահովել է բերքի կառուցվածքային տարրերի լավագույն արդյունք, ինչը արտահայտվել է նաև լեռնային և Նախալեռնային գոտիներում:

Աղ. 1-ի տվյալները հաստատում են, որ Ամբերդ սորտը իր արդյունավետությամբ գերազանցել է ստուգիչ հանդիսացող տեղական Թալինի -6 սորտին ոչ միայն Արարատյան դաշտի, այլև Նախալեռնային և լեռնային գոտու պայմաններում մշակելիս: Բերքի կառուցվածքային տարրերի արդյունքների վերլուծությունից պարզվել է, որ 1 բույսի ունեղների և հատիկների թիվը, ինչպես նաև հատիկների կշիռը ընտրված սորտի մոտ բարձր է ստուգիչի համեմատությամբ: Ըստ գոտիների Ամբերդ սորտի 1 բույսի ունեղների քանակը տատանվում է 105-140 հատ, ունդում հատիկների թիվը՝ 154-229 հատ, ունդում հատիկների կշիռը 5,50-6,50գ: Ստուգիչ տարբերակում այդ ցուցանիշները տատանվել են համապատասխանաբար՝ 70-97 հատ, 103-107 հատ և 4,70-5,30 գ:

Ամբերդ սորտի բերքի կառուցվածքային տարրերի լավագույն ցուցանիշները իրենց ազդեցությունն են թողել բերքի ձևավորման վրա և արդյունքում բերքատվության ցուցանիշը բոլոր բնակլիմայական պայմաններում գերազանցել է տեղական Թալինի-6 սորտի բերքատվությանը: Աղ. 1-ի տվյալները ցույց են տալիս, որ ընտրված սորտի միջին բերքը հեկտարից ըստ գոտիների տատանվում է 24,7-29,2 g, իսկ ստուգիչում 20,4-23,8 g: Ամենաբարձր բերք (29,2 g) ապահովել է Ամբերդ սորտը լեռնային պայմաններում:

Արարատյան դաշտավայրի պայմաններում ուսպի համաշխարհային հավաքածուից ընտրված բարձր բերքատու, վաղահաս, կանգուն Ամբերդ սորտի էկոլոգիական փորձարկումը ցույց է տվել, որ գյուղատնտեսական բոլոր գոտիներում այն իր կենսաբանական և տնտեսական հատկանիշներով գերազանցել է տեղական Թա-

լինի 6 սորտին: Ամբերդ սորտը տեղական սորտի համեմատ Արարատյան դաշտի պայմաններում ապահովել է 4,9 g/հա, Նախալեռնային գոտում՝ 4,3 g/հա, իսկ լեռնային գոտու պայմաններում՝ 5,4 g/հա բերքի հավելում:

Հետազոտությունն իրականացվել է ՀՀ Գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 18T-4B312 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Ղազարյան Ռ.Հ.* Հատիկաընդեղեն մշակաբույսերի սերմնաբուծությունը և մշակության տեխնոլոգիան ՀՀ Սյունիքի մարզի գյուղատնտեսական արտադրության հիմնախնդիրները: Գիտարտ. կոնֆ. նյութեր, Երևան-Սիսիան, 12-18 էջ, 2008:
2. *Սարուխանյան Ն.* Հատիկաընդեղեն մշակաբույսեր: Կանաչ արահետ հ/կ, Երևան, 80 էջ, 2010:
3. *Գալստյան Մ.Ա.* Экологическая функция бобовых в природных экосистемах и агроценозах Севанского бассейна Республики Армения. “Нетрадиционное растениеводство. Селекция. Охрана природы. Эниология. Экология и здоровье”: Мат.- лы XVII межд. симп., 13-21 сентября 2008г., г. Алушта. Симферополь, с.129-132, 2008.
4. *Доспехов Б.А.* Методика полевого опыта. М., “Колос”, 336 с., 1973.
5. *Енремян Дж.В., Казарян Р.Г.* Результаты изучения сортообразцов мировой коллекции чечевицы в условиях Араратской равнины. Известия Арм. сельхозакадемии. 3-4, стр. 30-33, 2003.

Ստացվել է 14.05.2020